[1] Դուրս գրման ամսաթիվ			Հարկային հաշիվ (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)	[2] Սերիա	[3] Համար
10	Դեկտեմբեր	2018 թ.		Ա	2850053533
[4] Մատակարարման ամսաթիվ				Ճշգրտվող հաշվի	
10	Դեկտեմբեր	2018 թ.		Սերիա	Համար
				Ճշգրտվող հաշվի դուրս գրման ամսաթիվ	
Պայմանագիր	[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար			
[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)					
[7.1] ՀԴՄ կտրոնի համար					

Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի

[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0 1 5 0 3 4 4 8
[9] Անվանումը	«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» Հիմնադրամ
[10] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	0 1 5 0 3 4 4 8 / 1
[11] Բանկային տվյալները	Հայբիզնեսբանկ ՓԲԸ — N 11500166513800
[12] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ԹԱՂԱՄԱՍ Կորյունի 2
[13] Լրացուցիչ տվյալներ	

Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի

[14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0 2 6 3 1 2 6 3
[15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	
[16] Անվանումը	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ
[17] Բանկային տվյալները	ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն — N 900011000834
[18] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՍԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5
[19] Լրացուցիչ տվյալներ	
[20] Ում միջոցով	Անուն, ազգանուն:
	Լիազորագիր — Համար:
	Լիազորագիր — Ամսաթիվ:

[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

N	Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը)	Չափման միավորը	Ընդհանուր ծավալը [illegible]	Միավորի գինը	Զեղչ(%)	Արժեքը	ԱԱՀ դրույքաչափը (%)	ԱԱՀ գումար	Ընդամենը
1	2	3	4	5	6	7	8	9	10
1	34200117 դատահոգեբանական փորձաքննություն	հատ	1	32833.33		32833.33	20	6566.67	39400
Ընդամենը						32833.33	X	6566.67	39400

Դուրս գրող՝ PARSEGHYAN LARISA 6808700354
(անունը, ազգանունը)

Ստացող
(պաշտոնը) (ստորագրությունը) (անունը, ազգանունը)

(պաշտոնը) (ստորագրությունը) (անունը, ազգանունը)

10/12/2018 15:23:37

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
Ամբուլատոր դատահոգեբուժական և դատահոգեբանական համալիր փորձաքննություն նշանակելու մասին

« 15 » սեպտեմբերի 2017թ. ք. Գյումրի

ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության ՀԿԳ քննիչ, արդարադատության կապիտան՝ Ծ.Վ.Իկիլիկյանս, քննարկելով վարույթիս 34200117 քրեական գործի նյութերը.

Պ Ա Ր Զ Ե Տ Ի

2017 թվականի հուլիսի 3-ին ժամը 14:45-ին «Տիրամայր Նարեկի» հիվանդանոցից ահազանգ է ստացվել ոստիկանության Աշոցքի բաժին այն մասին, որ «դեղորայքային թունավորում» ախտորոշմամբ բուժօգնության է դիմել Աշոցք համայնքի Ղազանչի գյուղի 9-րդ փողոցի 1-ին տան բնակչուհի, 19.06.1965թ. ծնված Աիդա Գասպարի Վարդանյանը, ով տեղափոխվել է «Գյումրի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերություն և ընդունվել ստացիոնար բուժման:

Մեկնած օպերատիվ խումբը պարզել է, որ Աիդա Վարդանյանը թունավորվել է 2017 թվականի հուլիսի 3-ին ժամը 11:00-ից մինչև 12:00-ն ընկած ժամանակահատվածում իրենց տանը «Ամիտրիպտիլին, կետիլեն և ռիսետ» տեսակի 30-ից 40 հատ դեղահաբեր խմելու հետևանքով:

Դեպքի առթիվ ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչության Ամասիայի բաժնում նախապատրաստվել են նյութեր, որ 2017 թվականի հուլիսի 4-ին ուղարկվել է Շիրակի մարզային քննչական վարչություն՝ նյութերի նախապատրաստումը շարունակելու համար:

2017 թվականի հուլիսի 13-ին որոշում է կայացվել նյութերով քրեական գործ հարուցելը մերժել՝ հանցագործության դեպքի բացակայության հիմքով:

2017 թվականի հուլիսի 20-ին Շիրակի մարզի դատախազության ավագ դատախազ Հ.Լ.Պողոսյանը որոշում է կայացրել Աիդա Գասպարի Վարդանյանի թունավորման դեպքի առթիվ նախապատրաստված նյութերով քրեական գործ հարուցելը մերժելու մասին 2017 թվականի հուլիսի 13-ին կայացված որոշումը վերացնելու և ՀՀ քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով թիվ 34200117 քրեական գործ հարուցելու մասին, որը ուղարկվել ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչություն՝ նախաքննություն կատարելու համար:

2017 թվականի հուլիսի 21-ին որոշում է կայացվել Աիդա Գասպարի վարդանյանին տուժող ճանաչելու մասին:

Որպես տուժող հարցաքննված Աիդա Գասպարի Վարդանյանը ցուցմունք է տվել, որ բնակվում է Շիրակի մարզի Ղազանչի գյուղի 9 փողոցի 1-ին տանը ամուսնու՝ Քաջիկ Գրիգորյանի, դստեր՝ Գոհար Գրիգորյանի հետ համատեղ, աշխատանք չունի, զբաղվում է տնային գործերով: 1988 թվականին տեղի ունեցած երկրաշարժի ժամանակ, տեսարաններից ծանր հոգեկան ապրումներ է ունեցել, որից հետո 1989 թվականին դիմել է Երևան քաղաքում գտնվող Նոր Նորքի հոգեբուժական հիվանդանոց, որտեղ իրեն հետազոտել են և համապատասխան բուժում նշանակել: 2009 կամ 2010 թվականին, երբ հոգեկան վիճակը կրկին սրացել է, դիմել է Երևան քաղաքի «Սթրես» կենտրոն, որը ներկայումս «Արթմեդ բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության բաժանմունքներից մեկն է, որտեղ իրեն հետազոտելուց հետո «Ամիտրիպտիլին», «կետիլեպտ» և «ռիսետ» տեսակների դեղորայքային բուժում են նշանակել: Դրանից հետո պարբերաբար դիմել է Արթմեդ բժշկական կենտրոն համապատասխան հետազոտումներ անցնելու համար, մինչև դեպքը՝ վերջին

2012 թվականի օգոստոսի 31-ին, հետազոտվել է և նրա մոտ նախնական ախտորոշվել է «բիպոլար՝ երկբևեռ աֆեկտիվ խանգարում» ախտորոշումը: Աիդա Վարդանյանին նշանակվել է ամբուլատոր բուժում, խորհուրդ է տրվել բուժումը անցկացնել նյարդահոգեբուժական դիսպանսերում, իսկ մինչև հոգեբուժական դիսպանսեր դիմելը, խորհուրդ է տրվել օգտագործել «ռիսպակսոլ, կետիլեպտ և ամիտրիպտիլին» տեսակների դեղորայք, որոնց օգտագործման չափաքանակը նշված է նրա ամբուլատոր քարտում: Դրանից հետո Աիդա Վարդանյանը «Արթմեդ բժշկական վերականգնողական կենտրոն» ՓԲԸ այցելել է 2017 թվականի հուլիսի 13-ին, անցել է բժշկական զննում, նրա մոտ ախտորոշվել է «շիզոաֆեկտիվ խանգարում»: Վերջին այցի ժամանակ հիվանդի և նրա աղջկա պատմածով պարզվել է, որ հոգեբուժարան չեն դիմել և բուժումը շարունակել են տնային պայմաններում, ըստ նրանց խոսքերի՝ հիվանդի վիճակը եղել է բավարար, սակայն դիմելուց մոտավորապես մեկ ամիս առաջ ինքնասպանության փորձ է կատարել և կրկին խորհուրդ է տրվել հիվանդին տանել հոգեբուժական դիսպանսեր: Աիդա Վարդանյանը 2017 թվականի հուլիսի 13-ին «Արթմեդ բժշկական վերականգնողական կենտրոն» ՓԲԸ է դիմել աղջկա՝ Գոհարի հետ, հայտնել է, որ մայրը ինքնասպանության փորձ է կատարել և նրան տեղափոխել են վերակենդանացման բաժանմունք: Երբ Գոհարը հայտնել է մոր կողմից մեծ քանակությամբ դեղահաբեր օգտագործելու՝ ինքնասպանության փորձ կատարելու մասին, Աիդա Վարդանյանը չի ժխտել այդ հանգամանքը: Իր կողմից Ա.Վարդանյանին նշանակված «ռիսպակսոլ», «կետիլեպտ», «ամիտրիպտիլին», «էգոլանզա», «ատառակս», «վենլաքսոր» տեսակների դեղորայքները ազատ վաճառք են, ընդ որում կարելի է ձեռք բերել առանց դեղատոմսի:

Որպես վկա հարցաքննված «Գյումրի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության վերակենդանացման բաժանմունքի բժիշկ Աշոտ Հովհաննեսի Քաբաբյանը ցուցմունք է տվել, որ 2017 թվականի հուլիսի 3-ին ժամը 16:00-ի սահմաններում «Գյումրի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերություն շտապ բուժօգնության ավտոմեքենայով բուժօգնության է տեղափոխվել Շիրակի մարզի Ղազանչի գյուղի բնակչուհի Աիդա Գասպարի Վարդանյանը՝ անգիտակից վիճակում: Հիվանդության և կյանքի պատմությունը հավաքվել է Աիդա Վարդանյանի աղջկանից՝ Գոհար Գրիգորյանից: Վերջինս հայտնել է, որ բժշկական կենտրոն տեղափոխելուց 2-3 ժամ առաջ մայրը խմել է «ամիտրիպտիլին, կետալեպտ և ռիսետ» տեսակների դեղահաբեր՝ կյանքին վերջ տալու նպատակով, իսկ թե ինչ քանակությամբ է հիվանդը օգտագործել, չի կարողացել ասել: Գոհարը հայտնել է նաև, որ մայրը ութ տարի առաջ ունեցել է հոգեկան խանգարումներ, որի համար ստացել է դեղորայքային բուժում: Հիվանդը անմիջապես ստացիոնար բուժման է ընդունվել վերակենդանացման բաժանմունք և ստացել է համապատասխան բուժօգնություն: Ժամեր անց հիվանդի գիտակցությունը վերականգնվել է և ինքնազգացողությունը լավացել: Հաջորդ օրը՝ 2017 թվականի հուլիսի 4-ին կազմակերպվել է հոգեբույժի կոնսուլտացիա, որի կողմից ախտորոշվել է «սիտուացիոն իրավիճակ, սուիցիդալ մտքեր» ախտորոշումը: Նույն օրը ժամը 14:00-ին հիվանդը լավացումով դուրս է գրվել բժշկական կենտրոնից: Հիվանդի մոտ նախնական ախտորոշվել է «սուր էկզոգեն դեղորայքային թունավորում», իսկ վերջնական ախտորոշվել է դեղորայքային գերդոզավորում, սիտուացիոն իրավիճակ, սուիցիցդալ մտքեր»: Աիդա Վարդանյանը չի ասել, թե ինչ նպատակով է դեղահաբերը օգտագործել, իր և հոգեբույժի կողմից Աիդա Վարդանյանին առաջարկվել է բուժումը շարունակել հոգեկան առողջության կենտրոնում, սակայն վերջինս հրաժարվել է:

Քրեական գործի նախաքննության ընթացքում «Արթմեդ բժշկական վերականգնողական կենտրոն» ՓԲ ընկերությունից պահանջվել և ստացվել է Աիդա Վարդանյանի ամբուլատոր քարտի պատճեն, իսկ «Գյումրի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերությունից պահանջվել և ստացվել է Աիդա Վարդանյանի հիվանդության պատմագրի պատճեն:

թ/ Կա՞ն արդյոք Աիդա Վարդանյանի մոտ հոգեկան հիվանդության հետ չկապված հոգեկան թերզարգացման /մտավոր հետամնացության/ հատկանիշներ, եթե այո, ապա ինչու՞մ են դրանք արտահայտվում, դեպքի պահին Աիդա Վարդանյանը գտնվե՞լ է արդյոք այնպիսի հոգեկան վիճակում, / հոգեկան լարվածություն, ֆրուստրացիա, շփոթվածություն, սթրես և այլն/ որը կարող էր էապես ազդել նրա գիտակցության և հոգեկան գործունեության վրա, գիտակցել է իր հետ կատարվածի բնույթն ու նշանակությունը:

ժ/ Աիդա Վարդանյանը իր տարիքին և կենսափորձին համապատասխա՞ն է ընկալում և վերարտադրում իրականությունը, թե ոչ, վերջինս կարո՞ղ էր ամբողջապես հասկանալ իր հետ կատարվածը:

ի/ Ինչ հոգեբանական վիճակում է գտնվել Աիդա Վարդանյանը ինքնասպանության փորձին նախորդող ժամանակահատվածում, այդ հոգեբանական վիճակը նրան մղել է ինքնասպանության կամ ինքնավնասման, եթե այո ապա ինչն է եղել այդ վիճակի զարգացման պատճառները:

լ/ Աիդա Վարդանյանը անհատական-հոգեբանական որևէ առանձնահատկություններ ունեցել է, որոնք կարող էին նպաստել ինքնասպանության դիմելուն:

խ/ Հաշվի առնելով փորձաքննվողի անհատական և հոգեբանական առանձնահատկությունները, ինտելեկտուալ անձնային զարգացման մակարդակը և հետազոտվող իրավիճակի բովանդակությունը կարո՞ղ էր արդյոք նա հասկանալ իր նկատմամբ կատարված գործողությունների բնույթը և նշանակությունը, կարո՞ղ էր արդյոք ճիշտ բացատրություն տալ կամ կարող է ճիշտ ցուցմունքներ տալ:

Փորձաքննության ընթացքում եթե կառաջանան այլ հարցեր, որոնք որոշմամբ չեն առաջադրվել, սակայն դրանց պատասխանը մտնում է փորձագետների իրավասության մեջ ու դրանց պարզաբանումը կարող է կարևոր նշանակություն ունենալ փորձաքննության լիարժեքության ապահովման համար՝ խնդրվում է պատասխանել նաև այդ հարցերին:

2.Փորձագետների միջնորդությամբ փորձաքննությանը ներկայացնել Աիդա Վարդանյանին և 34200117 քրեական գործի նյութերը:

ՀԿԳ քննիչ՝ **Շ.Վ.Իկիլիկյան**